ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Տիգրան Պետրոսյան - Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա), 2025 թվականի դեկտեմբերի 11-13-ը

3. Հրավիրող կողմը.

Տեսչական մարմնի ղեկավար Տիգրան Պետրոսյանի և Ռուսաստանի Դաշնության Անասնաբուժական և բուսասանիտարական հսկողության դաշնային ծառայության (Ռոսսելխոզնադզոր) ղեկավար Սերգեյ Դանկվերտի միջև նախապես կայացած պայմանավորվածության համաձայն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Ռուսաստանի Դաշնության սահմանային անցակետերում բուսասանիտարական վերահսկման ենթակա հայկական ապրանքների հսկողության, ՖԳԻՍ «Արգուս-Ֆիտո» և ԱԻՍ «Արմֆիտոս» տեղեկատվական համակարգերի ինտեգրման և ոլորտային մի շարք հարցերի քննարկման նպատակով

5. Քննարկված թեմաները.

Ռուսաստանի Դաշնության Անասնաբուժական և բուսասանիտարական հսկողության դաշնային ծառայության (Ռոսսելխոզնադզոր) ղեկավար Սերգեյ Դանկվերտի հետ հանդիպման ժամանակ քննարկվել են Ռուսաստանի Դաշնության սահմանային անցակետերում բուսասանիտարական վերահսկման ենթակա հայկական ապրանքների հսկողությանն առնչվող հարցերը, մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մի շարք հայկական ընկերություններ Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն բուսական ծագման ապրանքներ տեղափոխելիս դրանք չէին ներկայացնում

Ռուսաստանի Դաշնության լիազոր մարմնի՝ Ռոսսելխոզնադզորի հսկողությանը և ՌԴ տարածքում, խախտելով ԵԱՏՄ օրենսդրությունը, իրացնում էին հսկողություն չանցած և թույլատվական փաստաթուղթ չունեցող ապրանքներ: Հանդիպման ժամանակ նշվել է, որ վերոնշյալ խախտումների դեպքերը կտրուկ նվազել են՝ ավելի քան 70 տոկոսից հասնելով մինչև 6 տոկոսի: Տեսչական մարմնի ղեկավարը փոխանցել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետաքրքրվածությունը՝ ուղղակիորեն մասնակցելու ՌԴ «Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն» դաշնային պետական բյուջետային հիմնարկից կենդանիների դաբաղ հիվանդության համապատասխան շտամի պատվաստանյութի գնման գործընթացին, որին նախկինում չի կարողացել մասնակցել: Սերգեյ Դանկվերտը խոստացել է այս հարցում աջակցություն ցուցաբերել հայկական կողմին:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Կողմերը քննարկել են նաև ՖԳԻՍ «Արգուս-Ֆիտո» և ԱԻՍ «Արմֆիտոս» տեղեկատվական համակարգերի ինտեգրմանն առնչվող հարցը, որը հնարավորություն է տալիս ապահովել բուսասանիտարական ենթահսկման ապրանքների հետագծելիությունը, այն նախկինում իրականացվել է միայն պիլոտային եղանակով: Տեսչական մարմնի ղեկավար Տիգրան Պետրոսյանը տեղեկացրել է, որ այժմ ՖԳԻՍ «Արգուս-Ֆիտո» և ԱԻՍ «Արմֆիտոս» տեղեկատվական համակարգերի ինտեգրումը գտնվում է բարձր պատրաստվածության մակարդակում, դրանք լիովին շահագործվում են և առցանց եղանակով ստեղծվող բուսասանիտարական հավաստագրերը հասանելի են ռուսական կողմին:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Կայացած բանակցությունների արդյունքում՝ Տեսչական մարմնի երաշխիքների ներկայացմամբ, կվերականգնվեն ևս մեկ ընկերության կողմից բուսասանիտարական վերահսկման ենթակա արտադրանքի մատակարարումները: Ռուսական կողմը պատրաստակամություն է հայտնել դիտարկել և վերականգնել մատակարարումները նաև այլ ձեռնարկություններից՝

այն դեպքերում, երբ կներկայացվեն անհրաժեշտ նյութերը և Տեսչական մարմնի երաշխիքները: Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն անասնաբուժական և բուսասանիտարական ենթահսկման ապրանքների տեղափոխման ժամանակ առաջացած խնդիրների լուծմանն առնչվող հարցերի քննարկման նպատակով կողմերը պայմանավորվել են առավել հաճախակի կազմակերպել աշխատանքային հանդիպումները՝ այդ թվում առցանց ձևաչափով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

9. Ստորագրությունը, ամսաթիվը. 17.12.2025թ.